Տ. ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(28 փետրվարի 2019 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

«Անզգամների աչքին թվաց, թե նրանք մեռան, եւ նրանց ելքն այս աշխարհից համարվեց տանջանք, իսկ նրանց հեռանալը մեզանից՝ կործանում, բայց նրանք գտնվում են խաղաղության մեջ»։

(Իմաստ. Գ. 2–3)

Սիրելի՛ բարեպաշտ հայորդիներ,

Մարդկության պատմության ակունքներում, երբ նախաստեղծ մարդը զանց առավ Արարչի պատվիրանը եւ մեղքի դառն բաժակն ըմպելով՝ կորցրեց հավիտենությունն ու գործի դրեց ժամանակը, սկսեց պտտվել նաեւ պատմության անիվը՝ իր անտեսանելի ներկայությամբ ականատես լինելով բոլոր ժամանակներում ազգերի հետ տեղի ունեցող իրադարձություններին։ Պատմությունը մշտարթուն աչքով հետեւում է դեպքերի ընթացքին եւ անաչառ գրառումներ կատարում իր էջերում։ Այդ էջերը երբեմն սեւանում են ազգերի ամոթալի ու չար ընթացքի պատճառով, երբեմն բոսորագույն են դառնում՝ հեղված արյան առատությունից, երբեմն էլ գրվում են ոսկե տառերով՝ ազգային հպարտության առիթ ընձեռելով ապագա սերունդներին։ Հայ ժողովրդի պատմության ոսկետառ էջերից մեկը կերտած հերոսներին ենք անդրադառնում այսօր, սիրելի՛ հավատացյալներ, եւ հիշատակում Վարդանանց Սուրբերին։

Մեր պատմությունը, ցավալիորեն, լի է օրինակներով, երբ մեծ ու զորեղ տերությունները, գայթակղվելով բիբլիական մեր երկրով, բազմիցս փորձել են գրավել այն եւ վերջ դնել հային ու նրա աստվածատուր ինքնությանը։ Ինքնություն, որ սկիզբ է առել դեռեւս ազգերի ձեւավորման ակունքներից, զորացել հային հատուկ քաջարի ոգով, հարուստ մշակույթով ու լեզվով, եւ հետո էլ՝ Հայ Եկեղեցու ուսուցանած աստվածային

ճշմարտությամբ։ Դարեր ի վեր հայ ժողովուրդն իր սերունդներին կաթի հետ սնուցել է նաեւ հայրենիքի, մայր եկեղեցու եւ ազգային արժեքների հանդեպ սիրով, եւ սովորեցրել. հայապահպանությունը յուրաքանչյուր հայորդու սրբազան պարտականությունն է։

Վստահ եմ, հենց այս մշտամնա արժեքների մասին էին մտածում Տղմուտի ափին հավաքված Վարդանանց քաջարի հերոսները, երբ «իմացեալ մահն» աչքերի առաջ նայում էին գետի մյուս ափին գտնվող թվով իրենց գերազանցող բանակին, սակայն անմահության ձգտող հայի անկոտրում ու հերոսական ոգին՝ սնուցված Քրիստոսի աստվածային զորությամբ, ապրելու կամքով եւ արդարության ձայնը հնչեցնելու վճռականությամբ, անդրդվելի էր՝ մինչեւ վերջին շունչն ի սեր հայրենիքի պայքարելու եւ այդ հայրենիքում իր հավատքն ազատ դավանելու հավաքական որոշման մեջ։ Վարդանանց քաջերն ականջալուր էին Դավթի պատգամին. «Պատվական է Տիրոջ առջեւ իր սուրբերի մահը (Սղմ. ՃԺԵ. 15)»։

451-ի գարունը Ավարայրի դաշտում համախմբել էր հային։ 1568 տարիներ առաջ, հանուն հայոց ոգու ինքնության, Մաշտոցյան հրաշքի հավերժության, հանուն քրիստոսագիր լույսի սփռումի դիմակայվեց մի ճակատամարտ, որը քրիստոնեության պատմության մեջ առաջինն էր, երբ մի ժողովուրդ իր քրիստոնյա հավատքի, իր համոզմունքների, իր հայրենիքի եւ ազատության սիրույն ողջակիզվում էր կամավոր զոհաբերությամբ։

Ավարայր... Լույսի եւ խավարի պայքարն էր Ավարայրը։ Հավերժության եւ ակնթարթի պայքարն էր Տղմուտի ափին։ Խավարն ու ակնթարթը չկարողացան կասեցնել լույսն ու հավերժությունը։ Եւ լույսը հորդեց, հավերժությունը հաղթանակեց եւ իր մեջ ընդգրկեց ժամանակն ամբողջ։

Ոտքի ելան քաջազուն հայորդիք ու փափկասուն տիկնայք անկոտրում կամքով պաշտպանելու իրենց հավատքը, լեզուն, մշակույթը՝ ազգի ինքնության առհավատչյան։ Տեր կանգնեցին հայոց բառ ու բանին, ծաղկում ապրող մեր ինքնությունն ու դիմագիծը պատմության մեջ կերտող քրիստոնեական մեր նոր մշակույթին։

Մայր Եկեղեցին Ավարայրի դաշտում միայնակ չէր թողել իր անձնվեր զավակներին եւ նրանց կողքին էր՝ ի դեմս կաթողիկոսի եւ համորեն հոգեւորականաց, ովքեր ոչ միայն խոսքով էին քաջալերում, այլեւ ամրապնդում էին հոգեւոր սպառազինությամբ։ Ճակատամարտին

նախորդող գիշերը մկրտել էին բոլոր չմկրտվածներին, Տիրոջ Սուրբ Արյան ու Մարմնի ճաշակմամբ, Սուրբ Հոգու պարգեւած առատաբուխ շնորհներով զորացնելով հայրենանվեր քաջերին եւ ամրացնելով նրանց հավատի մեջ։

Սիրելինե՛ր, չարաչար սխալվում են, ովքեր կարծում են, թե քրիստոնեությունը կրավորական, դեպի խեղճություն մղող մի կրոն է, որ հայ ժողովուրդը քրիստոնեություն ընդունելով՝ զենքի տեղը մանգաղ վերցրեց ու դրանով թուլացրեց նվաճողների դեմ տարվող պայքարի ոգին։ Ո՛չ, ո՛չ եւ երիցս ո՛չ։ Քրիստոսասեր Հայը միշտ էլ գիտեր մանգաղը սուրի տեղ ճոճել, իսկ բահով՝ թշնամուն կառափել։ Խոնարհության խրատ կարդացող հոգեւորականը գիտեր ոչ միայն աղոթքով զորացնել, խոսքով խանդավառել հայ շինականին ու հայ ծնողին, գութանից սուր ու վահան կռելու եւ զավկին հպարտությամբ ռազմի դաշտ ճանապարհելու, այլեւ գիտեր սեփական անձնազոհ օրինակով առաջամարտիկը լինել խաչն ու սուրը ձեռքին։ Այդպես եղել է, այդպես կա եւ այդպես էլ կլինի... Հիշենք.

Ապրիլ 2016, Արցախ, Հայրենական Մեծ Պատերազմ, Մայիսյան հերոսամարտ 1918 թ., Եղեռն ու ինքնապաշտպանական եւ ֆիդայական մարտեր, ռուս-թուրքական եւ ռուս-պարսկական պատերազմներ, Սյունյաց եւ Արցախի ազատագրական շարժումներ, Վահանանց պատերազմ, Ավարայր, Ջիրավ...

Բազում են օրինակները, երբ Խաչն ու սուրը, միասին են դեմ հանդիման կանգնել թշնամուն։ Բայց այսօր հիշատակում ենք Ավարայրը, ուր հայը մեկընդմիշտ ապացուցեց, թե խաղաղ աշխատելու, ստեղծագործելու ու աղոթելու կողքին գիտի նաեւ կռվել, դիմադրել ու անհանդուրժողական ոգի ցույց տալ բոլոր նրանց, ովքեր փորձել են կամ կփորձեն մեր փոքրիկ, սակայն, ազատասեր հայրենիքն ստրկացնել։ Այո՛, Ավարայրը տեւեց մեկ օր միայն։ Այո՛, անհավասար մարտում նահատակվեցին քաջարի սպարապետը, նախարարներ, հոգեւորականներ ու այլ քաջեր, բայց այն մինչ օրս հպարտությամբ է հիշատակվում սերունդների կողմից՝ ռազմական դեպքից վերափոխվելով պատմական մեծ դասի։ Ճշմարտացիորեն է նշել գրող Դերենիկ Դեմիրճյանը, որ «Վարդանանց պատերազմը հայ ժողովրդի կենաց հարատեության արտոնաթուղթը կնքեց»։

Պատմությունը եթե չի սիրում։ Սարսափելի է, սակայն, մտածել, թե ինչպիսին կլիներ հայ ժողովրդի այսօրը, եթե Սուրբ Վարդան

Մամիկոնյանն իր զինակիցների, եւ Սուրբ Ղեւոնդը հոգեւորականաց հետ չըմբոստանային եւ չկանխեին թշնամու ծրագրած հավատափոխությունը՝ ազատվելով օտարների քաղաքական եւ հային խորթ քաղաքակրթական լծից։

Վարդանանց սխրանքը, նրանց վճռական դիմադրությունը պարսկական հզոր տերությանը թույլ չտվեց իր կամքը պարտադրելու հայ ժողովրդին։ Դավանափոխության նենգ ծրագիրը բախվեց աննկուն ժայռի վրա կառուցված հայ հավատքի տանը եւ դարերի համար փաստվեց. զինաթափել հային, զրկել իր բոլոր արժեքներից, ջնջել նրա ազգային ինքնությունը անհնարին է, քանի որ հայ քրիստոնյայի երակներում հոսում է նաեւ Քրիստոսի հաղթանակած մեռոնաբույր արյունը։ Վարդանանց պայքարը հերթական անգամ ապացուցեց, որ Ճշմարիտ Աստուծով ամրապնդված մարդու ոգին անկոտրում է, եւ թեկուզ մարմինն էլ սպանվի՝ անմահ հոգին, միեւնույն է, հաղթանակում է։

Ու այսօր եւս շարունակվում է Ավարայրի քաջալերող սխրանքը ապրել մեր սրտերում եւ ամեն տեղ՝ աշխատանքում, գիտության, արվեստի, տնտեսության, յուրաքանչյուր մի բնագավառում։ Այդ սխրանքն ապրում է նաեւ սփյուռքում, ուր հայը գրեթե ամեն օր մղում է իր Ավարայրը հանուն հավատքի եւ հայության, որ չկորցնի իր ազգային դիմագիծը, որ հայ մնա եւ հայ ապրի։ Եւ այս նոր ավարայրների դեմ հաստատուն կամքով կանգնած է Հայ Եկեղեցին եւ անխոնջ կատարում է հայապահպան իր առաքելությունը։

Եւ քանի դեռ Հայաստանը շրջապատված է թշնամաբար տրամադրված երկրներով, քանի դեռ մեր երկրի սահմանների խաղաղությունը խախտվում է հակառակորդի կրակոցներից, քանի դեռ մեր քաջարի զավակներն իրենց կյանքն են տալիս հայրենիքի պաշտպանության համար, մենք պետք է զգոն լինենք եւ ազգային ու հոգեւոր արժեքները փոխանցենք սերնդե-սերունդ, որ մեր հերոս նախնիների նման մեր սրտերը եւս որդիական ջերմեռանդ սիրով բաբախեն թե՛ հայրենիքի եւ թե՛ Հայ Եկեղեցու համար։

Սիրելինե՛ր, այսօր շատերիս համար ուրախանալու մեկ այլ առիթ էլ կա։ Մեր ծնողները մեզանից շատերին կոչել են Վարդանանց սուրբերի անուններով։ Շնորհավորում եմ ձեզ՝ Վարդաններ, Խորեններ, Ատոմներ, Արտակներ, Հմայակներ, Համազասպներ, Արսեններ։ Անուններովդ հաստատ մնաք, սիրելինե՛ր։ Հավատում ենք, որ այն բարի ցանկությունը, որ

մեր ծնողներն ունեին անվանադրելիս, Տիրոջ ողորմությամբ եւ մեր պահապան սուրբերի բարեխոսությամբ, բոլորս Վարդանանց ոգու շնորհընկալը պիտի լինենք։

Այս պահին, սիրելի՛ հավատացյալներ եւ միաբանակից եղբայրներ, թույլ տվեք ձեր բոլորի անունից շնորհավորելու նաեւ Հայոց մեր Հորը, Ազգիս Հայրապետ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին։ Վեհափա՛ռ Տեր, Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը, որ հայ ժողովրդի ու Եկեղեցու պատմության հմուտ գիտակն էր, վստահաբար տեսել է Ձեր մեջ նահատակ Գարեգին իշխանի համարձակ եւ նվիրյալ ոգին, երբ սրբալույս մյուռոնով օծել է Ձեր ճակատը։ Քիչ հետո բոլոր հայ եկեղեցիներում ի սփյուռս աշխարհի պիտի կատարվի Հայրապետական մաղթանք։ Ամենքս ծնրադիր աղոթք բարձրացնենք առ բարերար եւ բազումողորմ Աստված, որ Ձեր կոչման մեջ Ձեզ հաստատուն ու անսասան պահի՝ շարունակելու համար հեզությամբ եւ ուղղափառ հավատով հովվել արդեն երկու տասնամյակ Ձեր հոգեւոր խնամքին հանձնված Հայոց ածուին։

Սուրբ Վարդանանց պայծառ հիշատակի առջեւ խոնարհումով եւ բարեխոսության հայցմամբ խնդրենք Երկնային Զորագլուխ Տեր Հիսուս Քրիստոսից խաղաղություն եւ անդորրություն երկրին Հայոց եւ աշխարհին համայն, այսօր եւ վաղը եւ հավիտյանս հավիտենից, ամեն։